

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2024
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի N10-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« _____ » _____ 2024 թ.

N _____ -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի N10-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով <Քաղաքաշինության մասին> օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 5.1-ին կետը, <Նորմատիվ իրավական ակտերի մասին> օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ`

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2024 թվականի փետրվարի 22-ի ՀՀԾՆ 21-01.01-2024 <Շենքերի և շինությունների հակահրդեհային պաշտպանության համակարգեր. Ավտոմատ հրդեհաշիջման և հրդեհային ազդանշանման կայանքներ. Նախագծման նորմեր> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2005 թվականի մայիսի 2-ի N75-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> N10-Ն հրամանի հավելվածի.

1) Աղյուսակ 11-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <Բնակելի և հասարակական շենքերում/շինություններում, սենքերում հրդեհաշիջման (այդ թվում՝ ինքնաշխատ) համակարգերի համար ներկայացվող պահանջները> ,

2) Աղյուսակ 11-ի 2-րդ կետի 4-րդ ենթակետի <Օբյեկտների խումբը, անվանումը> սյունակին համապատասխանող ձևակերպումը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <Նախադպրոցական կազմակերպությունների առանձին կառուցված, ներկառուցված, կցակառուցված (այլ շենքերում տեղակայված) շենքեր/շինություններ, ռեկրեացիոն և օժանդակ սենքեր, մանկական խաղասրահներ (բացառությամբ նախադպրոցական կազմակերպություններում նախատեսվածների), Գ2-Գ4 խմբերի այրելիությամբ նյութերի կիրառմամբ, նախադպրոցական կրթական այլ ծրագրեր իրականացնող օբյեկտներ, համալիրներ> ,

3) Աղյուսակ 11-ի <Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգը> սյունակի անվանումը շարադրել հետևյալ ձևակերպմամբ. <Հրդեհաշիջման (այդ թվում՝ ինքնաշխատ) համակարգը> ,

4) Աղյուսակ 11-ի 2-րդ կետի 4-րդ ենթակետի <Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգը> սյունակին համապատասխանող ձևակերպումը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <հրդեհաշիջման ինքնաշխատ նրբաջրային, սպրինկլերային համակարգերը, հրդեհաշիջման հիդրանտները, ջրափրփրային կամ հրդեհի ազդանշանման կայանքները, համարժեք այլընտրանքային համակարգերը նախատեսվում և ընտրվում են ըստ օբյեկտի տեխնիկական առաջադրանքի> :

5) Աղյուսակ 11-ի 2-րդ կետի 5-րդ ենթակետի <Օբյեկտների խումբը, անվանումը> սյունակին համապատասխանող ձևակերպումը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <Դպրոցական կազմակերպությունների շենքեր/շինություններ, ռեկրեացիոն և օժանդակ սենքեր (տարրական, միջին, հիմնական և ավագ)> ,

6) Աղյուսակ 11-ի 2-րդ կետի 5-րդ ենթակետի <Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգը> սյունակին համապատասխանող ձևակերպումը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <հրդեհաշիջման ինքնաշխատ նրբաջրային, սպրինկլերային համակարգերը, հրդեհաշիջման հիդրանտները, ջրափրփրային կամ հրդեհի ազդանշանման կայանքները, համարժեք այլընտրանքային համակարգերը նախատեսվում և ընտրվում են ըստ օբյեկտի տեխնիկական առաջադրանքի> :

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը

հաջորդող օրվանից: